**Նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Պ-743$^{8}$-14.12.2023,05.02.2024-ՄԻ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«16) «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման  եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց.»:

**Հոդված 2.** Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ» ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 41-րդ հոդվածի 5-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետեւյալ ~~բովանդակությամբ~~ խմբագրությամբ.

«16) «Ընտան~~իքում~~եկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ~~,~~ ընտան~~իքում~~եկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ~~եւ ընտանիքում համերաշխության վերականգնման~~ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտան~~իքում~~եկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց.»:

**Հոդված 2.** Եզրափակիչ մաս

~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: